

## **ԿԻԶԱԿԵՏՄԱՆ, ԱՌԱՋԻՆԸ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍԻՆԵՐԳԻՉՄԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

**Ա. Հ. ԱՌԱՋԵԼՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

**Յ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*գործ դասախոս*

**Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու*

Բիզնեսի կառավարումը մրցակցային առավելության ստեղծման պլանավորված գործողությունների ընթացքում է: Յետևաբար, որպեսզի կազմակերպությունը բիզնեսում հասնի մրցակցային առավելության իր մրցակիցների նկատմամբ, պետք է ընտրի իր ռազմավարությունը՝ մի կողմից, պատկերացում ունենալով գործունեության ուժեղ և բույլ կողմերի մասին, մյուս կողմից՝ ճիշտ ընթացելով ազգային էկոնոմիկայի առանձնահատկությունները և այն ճյուղի կառուցվածքը, որտեղ գործում է կազմակերպությունը:

Գոյություն ունեն մրցակցային առավելություն ապահովելու բազմաթիվ ռազմավարություններ՝ ծախքերի գծով, արտադրանքի շերտավորման, կիզակետման, սիներգիզմի և այլն:

Կիզակետման կամ նեղ նասնագիտացման ռազմավարությունը կարելի է սահմանել որպես տնտեսական գործունեության ոլորտի ընտրություն՝ սահմանափակ կամ խիստ ընդգծված սպառողների ընդգրկմամբ: Այս ռազմավարությունը ենթադրում է կենտրոնացմել կազմակերպության գործունեությունը սպառողների համեմատաբար ոչ մեծ նպատակային խմբերի կամ ապրանքային անվանացանի բաժնի կամ էլ գործունեության որևէ ոլորտում: Ուստի այն արմատականորեն տարբերվում է նշված ռազմավարություններից, քանզի հիմնված է մրցակցության նեղ ոլորտով ճյուղի շրջանակների վրա (շուկայական որմնախորշերը): Շուկայի որմնախորշը հնարավոր է որոշել աշխարհագրական եզակիության տեսանկյունից, արտադրանքի օգտագործման հատուկ պահանջներից, կամ նրան հատուկ բնութագրերից, որոնք կարևոր են միայն որմնախորշի նաև կիցների համար: Դամաձայն ամերիկյան բացատրական բառարանի, շուկայական որմնախորշ հասկացությունը բնութագրվում է որպես իրավիճակ կամ գործունեության տեսակ՝ որևէ մեկի անհատական ընդունակությանը և բնույթին համապատասխան:

Յարկ է նշել, որ այդպիսի ռազմավարության ընտրության պատճառը հաճախ հանդիսանում է ռեսուրսների սակավությունը կամ բացակայությունը, սակայն, մեր կարծիքով, ավելի կարևոր պատճառ է ճյուղ կամ շուկա թափանցելու պատճեղի սաստկացումը: Յենց այդ է պատճառը, որ կիզակետման կամ նեղ նասնագիտացման ռազմավարությունը հատուկ է միջին կազմակերպություններին, չնայած դրանից կարող նաև օգտվել նաև խոշոր ընկերությունները: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այսպիսի ռազմավարության ժամանակ բիզնեսի հնարավորությունները սահմանափակվում են, ինարավոր է, որ շահույթի ստացումը անստեսվի:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են կիզակետման երկու ուղղություններ՝ կամ ընտրված շուկայական հատվածի սահմաններում ֆիրման աշխատում է հասնել ծախսերի գծով առավելության, կամ ուժեղացնել արտադրանքի շերտավորումը, կամ էլ իրազրություն է թե մեկը, թե մյուսը:

Կիզակետման ռազմավարությունն ուղղված է նրանիցների նկատմամբ առավելության հասնելուն՝ մեկուսացված, հաճախ շուկայի միակ հատվածում: Այս դեպքում ռազմավարության համար հիմք են ծառայում կազմակերպության գործունեության հատուկ ուղղվածությունը և նրա անձնակազմի որակավորման մակարդակը, որոնք հնարավորություն ունեն հաջողությամբ սպասարկել շուկայի որմնախորշերը:

Մեր կարծիքով, կիզակետման ռազմավարությունը ենթադրում է հասարակական պահանջմունքների բավարարումը իրականացնել գիտակցված, ոչ ավանդական ձևերով ու մեթոդներով: Այս ռազմավարության իրացման համար մեծ դեր է խաղում մարքեթինգը, որը բացահայտում է առաջացող իիմնախնդիրները և առաջադրում դրանց լուծման հնարավոր եղանակները:

Յայտնի է, որ ցանկացած երկրի տնտեսության մեջ գոյություն ունեն բազմաթիվ շուկայական որմնախորշեր, այդ բվում նաև ավանդական շուկաներում:

Շուկայական որմնախորշերի որոնման և նրանցում իրականացվող աշխատանքային գործընթացները դիմացիկ են:

Քանի որ, երբ կազմակերպությունը շուկայում բացահայտում է որմնախորշ, անմիջապես հայտնվում են նրանիցներ, որոնք փորձում են գրավել այդ որմնախորշը, այդ պատճառով կազմակերպությունը պետք է որոնի այնպիսի շուկայական որմնախորշ, որում նա հնարավորություն կունենա հաղթելու նրանիցներին: Այսպես, ամերիկյան ընկերություններից մեկը հայտնաբերելու էր շուկայական որմնախորշ՝ կապված ավտոմեքենաների գրանցման խնդիրների հետ (պարզում է, որ միայն մեր հանրապետությունում չէ, որ կան ավտոմեքենաների գրանցման հերթեր): Երբ կառավարությունը պարզեցրեց ավտոմեքենաների գրանցման ընթացակարգը, ֆիրման գտավ ուրիշ որմնախորշ, որտեղ նա իրականացնում էր կանգառների կարգը խախտելու համար ոստիկանության կողմից կալանքի վերցված ավտոմեքենաները բուքսիրով տերերին վերադարձնելու ծառայություն<sup>1</sup>:

Մ. Փորթերի կարծիքով քննարկված բիզնեսի երեք ռազմավարություններն են հանդիսանում են բազային: Այդ պատճառով կազմակերպությունը, որը ցանկանում է հասնել հաջողության, պետք է հետևի դրանցից որևէ մեկն, այլապես նա «կլրպի մեջտեղում», այսինքն՝ չի ունենա նրանիցները ուղարկություն, կունենա միջին ճյուղային արդյունքներից ցածր ցուցանիշներ:

Մ. Փորթերը այդ հիմնավորումը մեկնարկանում է նավաշինության օրինակով. «Երբ հսպանիայի, Իտալիայի և Բրիտանիայի նավաշինարանները գտնվում են անկախության մեջ պատճառով, որ նրանք ունեն ավելի բարձր ծախսեր, քան կորեան, նրանց մոտ բացահայտվում է շերտավորման հիմքը, որը հատկանշական է ճապոնիային: Նրանց հաջողվեց բացահայտել շուկայի հիմնական հատվածները, ուր կարող էին հասնել նրանիցները առավելության, ինչպես Ֆին-

<sup>1</sup> Современный маркетинг /Под. ред. В. Е. Хруцкого - М., "Финансы и статистика", 1991, стр. 198.

լանդիան (սահմանական սահմանական տերը)»<sup>2</sup>:

Կրևուան առաջավոր ֆիրմաների գործունեության ուսումնասիրությունները չեն ժխտում Ս.Փորթերի կանխադրույթները, սակայն նրանք կիրառում են անհամենատ մեծ թվով հնարավոր բիզնեսի մրցակցային ռազմավարությունները, կամ էլ դրանց համակցությունը<sup>3</sup>:

Այսպես, ճապոնական ավտոմոբիլային ֆիրմաները՝ Toyota, Nissan, Honda, հաճախակի բերում են ֆիրմաների օրինակները, որոնք ունեն մրցակցային առավելություն ինչպես ծախքերի, այնպես էլ որակի գծով: Յեռանկարային են համարվում այն ռազմավարությունները, որոնք ուղղված են արտադրանքի բարձր որակի և եզակի բնութագրերի հասնելուն արտադրողականության բարձրացման և ծախսերի կրճատման հաշվին: Այդպիսի ռազմավարությունները սկսեցին զարգանալ հետինդրուստրացման դարաշրջանում:

Առաջինը կամ վաղ (շուրջ) շուկա դուրս գալու ռազմավարություն ասելով հասկանում ենք այն, որ ֆիրման առաջինն է առաջարկում շուկայում յուրահատուկ ապրանքներ կամ ծառայություններ: Տվյալ ռազմավարությունը կարող է ապահովել կայուն մրցակցային առավելություն՝ ստանալով մենաշնորհային գերշահույթ և հասնելով ֆիրմայի արագ զարգացմանը: Յետևաբար ռազմավարության առավելությունը այն է, որ տվյալ կազմակերպությունը հանդիսանում է առաջինը տվյալ բիզնեսում, տվյալ տարածքում կամ էլ նոր շուկայում: Պարզ է, որ նոր շուկա հնարավոր է մտնել՝ ստեղծելով նոր տեխնոլոգիաներ, կիրառելով գոյություն ունեցող տեխնոլոգիաները նոր կոնտեքստում՝ լուծելով շրջակա միջավայրի նոր ֆինանսական ռիսկի կառավարման գործիքների հիմնախնդիրները:

Յանաշխարհային փորձը վկայում է, որ առաջանցումային են հանդիսանում նորամուծական ֆիրմաները, որոնք ծևավորելով մենաշնորհներ ի հաշիվ հայտնագործությունների, նորարարությունների և այլ նորամուծությունների, հնարավորություն են ստանում ծևավորելու նոր շուկա՝ հեռանկարային աճով: Յարկ է նշել, որ առաջնության հասնելը ավելի հեշտ է, քան այն պահպանելը: Այդ պատճառով առաջնորդ ֆիրմաները ծախսում են ավելի շատ միջոցներ գիտատեխնիկական հետազոտությունների վրա, որոնք փոխհատուցվում են նորույթների բարձր գների հաշվին, այսինքն ֆիրմաները կիրառում են զնային ռազմավարություն՝ «քաշել սերուցքը», կամ էլ սահմանել մենաշնորհային բարձր գներ իրենց արտադրանքի համար:

Այդպիսի ռազմավարության հիմնական առանձնահատկություններն են.

- տվյալ մրցակցային առավելությունն իմմանված է նորույթների կիրառման վրա (ապրանքային, տեխնոլոգիական, կազմակերպչական),
  - այն կապված է մեծ ռիսկի հետ, սակայն հաջողության դեպքում ապահովում է ավելի բարձր շահույթ, նաև գերշահույթ՝ մոնուպու գների սահմանման շնորհիվ,
  - այն հեշտ է նվաճել, սակայն դժվար է պահպանել,
  - նորույթների կիրառման ժամանակ բարդ է իրականացնել ալանավորումը, քանի որ այդ դեպքում հնարավոր չէ կիրառել նախորդ փորձը, առաջարկել ապագայի համար նախատեսվածը:

<sup>2</sup> Porter M. E. The Competitive of Notions – N.V., The Free Press, 1990, p. 40.

<sup>3</sup> Դж. Պոպովիչ, Պուտ կ պոկупատելու. — Մ., Прогресс, 1991, стр. 13.

Նորամուծական ֆիրմաները պետք է ունենան որակավորված անձնակազմ, բավարար ֆինանսական ռեսուլտսներ՝ նորամուծությունների ստեղծման և շուկա դուրս բերելու համար: Այսպիսի ռազմավարությունը հատուկ է խոշոր ֆիրմաներին կամ հակառակը՝ ոչ մեծ վենչուրային ձեռնարկություններին: Յարկ է նշել, որ վաղ շուկա դուրս գալու առավելությունը կախված է ոչ միայն նոր արտադրանքից կամ տեխնոլոգիաներից, այլ նաև առաքման մեթոդներից և նարքեթինգից:

Այս ռազմավարության բարձր ռիսկը պայմանավորված է հնչանական անորոշությամբ, այնպես էլ նորույթի նկատմամբ շուկայի արձագանքով:

Ուստի կազմակերպությունները պետք է ձեռնարկեն կոմերցիոն ռիսկը նվազեցնելու հատուկ միջոցառումներ: Մեր կարծիքով այդ միջոցառումները պետք է ուղղված լինեն, մի կողմից, պաշտպանելու նոր տեխնոլոգիաները, արտադրանքը, պատենտները, նոու-հառները, բարձր տեխնիկական մակրդակը, և այլն, մյուս կողմից՝ անհրաժեշտ է կիրառել շուկայի գնահատման, շուկա մուտք գործելու մարքեթինգի տարրեր մեթոդներ:

Ինչ վերաբերում է սիներգիզմ<sup>4</sup> ռազմավարությանը, ապա այն ենթադրում է ստանալ նրակցային առավելություն՝ միավորելով երկու կամ ավելի թվով բիզնես-միավորներ (տնտեսական ստորարաժանումներ) մեկ միավորում: Սիներգիզմի արդյունավետությունը և դրա կառավարման հմտությունը ստեղծում են առանձնահատուկ նրակցային առավելություն, որն իրացվում է կազմակերպության մակարդակով: Այն վերջին հաշվով դրսևորվում է տարրեր ապրանքային շուկաներում ծախքերի մակարդակի իջեցման կամ էլ եզակի հատկություն ունեցող արտադրանքների ձեռք բերման շնորհիվ:

Սիներգիզմի ռազմավարությունը ենթադրում է գործունեության արդյունավետության բարձրացում, ռեսուլտսների ապահովում (տեխնոլոգիաների և ծախքերի սիներգիան)՝ շուկայական ինֆրակառուցվածքների (համատեղ առաքում) կամ գործունեության (պլանավորման և առաքման սիներգիան) համատեղ օգտագործման հաշվին:

Սիներգիզմի ռազմավարության նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն նպաստում է արտադրությանը՝ ստանալու ավելի բարձր շահույթ բիզնես-միավորների համատեղ գործունեության ժամանակ, քան այն դեպքում, եթե նրանք կառավարվում են առանձին-առանձին :

Ամերիկայի տնտեսագետներ Ու. Քինգը և Դ. Քլիլանը գտնում են, որ սիներգիզմը հանդիսանում է ռազմավարության ընտրության, մշակման և մանրամասնման կարևոր տարր: Նրանք նշում են, որ սիներգետիկ էֆեկտը որքան էլ մեծ ներուժային լինի, չի կարող հանդես գալ ինքնին, այն պետք է պլանավորել և ստանալ: Եսկ այդ հնարավոր է, եթե սիներգիան բացահայտված և ընդունված է հիմնավորված պլաններում<sup>5</sup>: Սիներգետիկ արդյունավետությունը ավելի ցայտուն է դրսևորվում պորտֆելային մակարդակում, սակայն այն հնարավոր է մեկ բիզնես-միավորի սահմաններում:

<sup>4</sup> Սիներգիզմը (սիներգիա) գործնական պրակտիկայի երևույթ է, որի դեպքում պատկերավոր ասած 2+2>4: Ըստ Էլլերյան սիներգիզմ նշանակում է անցում քանակակից որակականի կամ էլ ուժերի միավորում:

<sup>5</sup> Յ. Կինգ, Դ. Կրիլան, Стратегическое планирование и хозяйственная политика. М., Прогресс, 1982, стр. 200.

Տնտեսական պրակտիկան վկայում է, որ համատեղ գործունեության արդյունավետությունը միշտ էլ բարձր է, քան անհատական ջանքեր գործադրող կազմակերպությունների գործունեությունների արդյունքների հասարակ գումարը, քանի որ համատեղ գործունեության ժամանակ իրացվում է համագործակցության և փոխկապվածության ներուժը:

Բ. Կարլոֆը նշում է, որ շատ մենեցերներ խուսափում են կիրառել «սիներգազմ» տերմինը՝ օգտագործելով հոմանիշներ, որոնք փոքր ինչ տարրերվում են իրենց նշանակությամբ: Այդպիսի հոմանիշներ են հանդիսանում «ռազմավարական լծակ», «փոխկապվածություն», «քավարարություն». «արժեքային առաջնություն»<sup>6</sup>: «Սիներգիզմ» տերմինն առաջին անգամ կիրառել է Ի. Անսոֆֆը՝ ֆիրմայի ներսում տարրեր գործողությունների փոխկապվածությունը գնահատելիս: Ըստ նրա, «սկզբնական իմաստով սիներգիզմ ընթանումը իրենից ներկայացնում է անցում մշակվող արդյունաբերությունում արտադրության մասշտաբով տնտեսման սկզբունքից ավելի լայն մասշտաբով գործունեության ռազմավարական տնտեսման սկզբունքին, որի համար աղբյուր է հանդիսանում տարրեր ռազմավարական բիզնես-միավորների փոխադարձ աջակցությունը»<sup>7</sup>:

Տվյալ ռազմավարության կիրառման շուկայական պայմաններ են հանդիսանում ռեսուրսների առկայությունը, գործունեության ոլորտը կամ էլ ջանքերի կամավոր միավորումը: Հետևաբար մենեցերները սիներգետիկ արդյունավետությունը հիմնավորում են այլ ձեռնարկությունների ձեռքբերմանը կամ էլ նրանց միավորնամբ:

Մեր կարծիքով, սիներգետիկ էֆեկտը բացառիկ բարդ երևույթ է: Նրա ստացումը կախված է տարրեր տարրերի լավագույն համատեղումից: Այդ տարրերից որևէ մեկի կամ էլ որևէ մասի բացքողումը կարող է բացառել այդպիսի էֆեկտի հասնելու հնարավորությունը: Դրանից խուսափելու համար նպատակահարմար է կիրառել տվյալ երևույթի կոլեկտիվ քննարկում այնպիսի մասնագետների մասնակցությամբ, որոնք տիրապետում են այդ երևույթներին:

Այն հնարավորություն է ընձեռում բացառել ցանկությունների և սպասելիքների մտածողությունը, որը հատուկ է այն մասնագետներին, որոնք փորձում են այդ ուղիով հասնել սիներգետիկ էֆեկտի: Բացի դրանց, կազմակերպության կառավարումը պետք է կազմակերպած լինի այնպես, որ բիզնես-միավորների կառավարիչները հետամուտ լինեն իրացնելու ներուժային սիներգիզմը: Յակառակ դեպքում, ինչպես նշում է Ի. Անսոֆֆը, «երևան է գալիս բացասական սիներգետիկ էֆեկտ, որը նա արտահայտում է « $2 + 2 < 4$ » ձևով: Ի. Անսոֆֆը գտնում է, որ ընտրելով սիներգիզմի ռազմավարությունը՝ մենեցերները պետք է ելնեն հետևյալ երեք դատողություններից<sup>8</sup>.

1. Գոյություն ունի՝ արդյոք ձեռնարկությունում սիներգետիկ էֆեկտ օգտագործելու ավանդույթ:

2. Ինչպիսի՝ փոխադարձ կապի մակարդակի է նախապատվություն տալիս բարձրագույն դեկադարակությունը և ինչպիսի՝ կառավարչական փորձ ունի տրա-

<sup>6</sup> **Б. Корлоф**, Деловая стратегия. М., Экономика, 1991, стр. 152.

<sup>7</sup> **И. Анофф**, Стратегическое управление. М., Экономика, 1989, стр. 124.

<sup>8</sup> Նույնը, էջ 129:

մադրության տակ՝ պիտանի կոնգլոմերանտի կամ սիներգետիկի ձեռնարկության համար:

3. Ինչպիսի<sup>6</sup> պահանջներ և կարգադրություններ են հանձնարարվում՝ արտաքին միջավայրի պայմանների փոփոխություններից ելնելով: Յարկ է նշել, որ որքան բարձր են արտաքին միջավայրի անկայունությունը և սպասվելիք վտանգները, խիստ է մրցակցությունը, այնքան մեծ է սիներգիզմի նշանակությունը հաջողության հասմելու համար:

Ծիշտ է նկատում ի. Անսոֆֆը, որ սիներգետիկ ռազմավարության մշակման հիմնական հիմնախնդիրը կապված է կառավարման ճկունության և սիներգիզմի հակասությունների հետ, կառավարման ճկունության բարձրացումը նվազեցնում է շահույթի ստացման և սիներգիզմի հնարավորությունը: Մյուս կողմից, տվյալ ռազմավարության համար գլխավոր վտանգը ճկունության պակասությունն է, հնարավոր փոխգիշման և որոշումների ընդունման իրազործումը: Այս թերությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ արժեքային առավելության վրա՝ հասցնելով այն նվազագույնի:

Յարկ է նշել, որ նշված ռազմավարությունը ընկած է տարբեր միությունների ստեղծման հիմքում՝ դաշնակցություն, արդյունաբերական-ֆինանսական խումբ՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Ազգային մասշտարով այդպիսի ռազմավարության արդյունք է տարբեր մարքեթինգային ցանցերի ստեղծումը, որը հնարավորություն է տայիս արտադրության և իրացման փոխադարձ գործունեությունից ապահովել սիներգետիկ էֆեկտ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Б. Корлоф**, "Деловая стратегия" - М., Экономика, 1991
2. **И. Анофф**, "Стратегическое управление" - М., Экономика, 1989
3. **У. Кинг, Д. Криланд**, «Стратегическое планирование и хозяйственная политика»- М., Прогресс,1982
4. **Дж. Пипдич**, «Путь к покупателю» — М., Прогресс, 1991
5. «Современный маркетинг» /Под. ред. **В. Е. Хруцкого** -М., «Финансы и статистика», 1991
6. **Porter M. E.** The Competitive of Nations - N.V, The Free Press, 1990
7. Ժամանակակից մարքեթինգ (փորձ և հիմնախնդիրներ): **Վ. Առաքելյան, Յ. Սութիան, Գ. Գրիգորյան, Գ. Սարգսյան**, Եր., "Նախապետ", 2008

#### НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СТРАТЕГИИ ФОКУСИРОВАНИЯ, ПЕРВОПРОХОДЦА И СИНЕРГИЗМА

**В. О. АРАКЕЛЯН  
А. А. МАРГАРИЯН  
М. МАРТИРОСЯН**

В статье анализируются некоторые вопросы стратегии фокусирования, первопроходца и синергизма и основные принципы их эффективного применения в бизнесе.

**SOME STRATEGIC ISSUES RELATING TO FOCUSING, FORWARDING AND  
SYNERGISM**

**V. H. ARAKELYAN  
H. A. MARGARYAN  
M. MARTIROSYAN**

The article analyses some issues relating to strategy of focusing, forwarding, synergism and basic effective principles of their implementation in business.

**МЕХАНИЗМ И ПОКАЗАТЕЛИ УПРАВЛЕНИЯ  
ОРГАНИЗАЦИОННОГО ПРОЕКТА**

**И. А. ДЖИМШИТАШВИЛИ**

Для современного состояния бизнеса развивающихся стран характерно возрастание значимости корпоративного стратегического управления. Значительная часть бизнеса уже перешла количественный предел (70 - 100 чел.), до которого еще возможно, а при определенных условиях и желательно управлять организацией на неформальной основе. Затем вступает в силу эффект Коуза<sup>1</sup>- возникновение особой категории затрат, растущих с увеличением размеров компаний: рост числа уровней иерархии, более благоприятная почва для злоупотреблений при значительном усложнении контроля, быстрое нарастание трудностей координации решений и действий.

Важность проблем корпоративного стратегического управления в современном постсоветском пространстве уже не подлежит сомнениям и подтверждается разными, регулярными встречами и заседаниями представителей данной сферы.

Одно из слабых мест компаний состоит в том, что создавшие их предприниматели останавливаются на уровне оперативного управления, хотя рост размеров бизнеса объективно заставляет их заниматься стратегическим управлением. Западная схема, когда компания, достигнув определенного размера или масштаба деятельности, акционируется и превращается из частной в публичную, а затем продолжает работать под командой наемных управленцев, в постсоветских странах не работает, отчасти из-за отсутствия в странах полноценного фондового рынка, отчасти - из-за негарантированных отношений собственности (когда велик риск того, что собственность незаконно отнимут). В результате предприниматели становятся посредственными менеджерами.

---

<sup>1</sup> Коуз Р. Г. Природа фирмы\Теория фирмы, СПб., 1995г.